



The International MotherBaby Childbirth Initiative (IMBCI) 10 քայլ դեպի Մայրուերեխայի* լավագույն խնամք

MotherBaby ճննդաբերության միջազգային կազմակերպության
(IMBCO) նախաձեռնություն
www.imbci.org

10 քայլերի ամփոփում

Մայրուերեխայի լավագույն խնամքը հիմնված է գրավոր սկզբունքների վրա, որոնք իրագործվում են կրթության և գործնական ոլորտներում՝ պահանջելով բուժաշխատողներից հետեւվյալը.

Քայլ 1. Հարգանքով և արժանապատվությամբ վերաբերվել յուրաքանչյուր կնոջ:

Քայլ 2. Ունենալ և պարբերաբար կիրառել մանկաբարձական գիտելիքներ և հմտություններ, որոնք լավագույնս նպաստում են ծննդյան նորմալ ֆիզիոլոգիային և կրճքով կերակրելուն:

Քայլ 3. Տեղեկացնել հղիներին աշխատանքի և ծննդաբերության ընթացքում շարունակական աջակցության մասին, ինչպես նաեւ այն մասին, որ նրանք իրավունք ունեն այդպիսի աջակցություն ստանալ իրենց ընտրած անձանցից:

Քայլ 4. Ապահովել ծննդաբերության հարմարավետություն և ցավազրկում առանց դեղամիջոցների՝ բացատրելով դրա առավելությունները բնականոն ծննդաբերության համար:

Քայլ 5. Կիրառել ապացուցված օգտակար մեթոդներ:

Քայլ 6. Խուսափել հնարավոր վնասակար մեթոդներից և գործելակերպերից:

Քայլ 7. Իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք նպաստում են առողջությանը և կանխում հիվանդությունն ու պատահարները:

Քայլ 8. Ապահովել շտապօգնության որակյալ ու ապացուցված միջոցառումներ:

Քայլ 9. Ապահովել խնամքի շարունակականություն՝ համագործակցելով համապատասխան բուժաշխատողների, հաստատությունների և կազմակերպությունների հետ:

Քայլ 10. Ձգտել իրականացնել BFHI-ի 10 քայլերը, որոնք հարկավոր են կրճքով հաջող կերակրման համար:

* Մայրն և երեխան կազմում են անբաժանելի միասնություն հղիության, ծննդյան և մանկության շրջանում, որը սույն փաստաթղթում կոչվում է «**Մայրուերեխա**»: